




ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈՂԸ ՓՐԿՁԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

(6 ապրիլի 1958 թ.)

«Յանուն Հոր և Որդու և Հոգւոյն Սրբոյ»:

Ամեն տարի, երբ տիեզերքին ու մեր աշխարհին մեջ, կյանքի նոր յույսեր կսկսին հոսիլ, անձանոքն ղեպի անձանոք, մենք՝ հոգեղեն արարածներս, տկար, հոգնաբեկ ու տարակուսանքներով լեցուն, բայց միշտ ծարավի մեծ ստուգուրյան, ինչպես Պետրոս և Հովնանենս երկու հազար տարիներ առաջ, սուր սպասումին տենդովր համակված, և անմար հույսի նրազր մեր սրտին, կղիմենք ղեպի փակված գերեզմանը Հիսուսի... եվ ահա, ո՛վ հրաշք և հաղորդւթյուն, այնտեղ բավալած կգտնենք ծանրությունը նյութեղեն վեմին, և գերեզմանը՝ դատարկ, ու կյսենք քաղցր արձագանքը ներշնչակի ձայնին՝

«ԳԻՏԵՄ, ՉԻ ԶՅԻՍՈՒՄ ԶԽՈՉԵԼԵԱՆ ԽՆԴՐԷՔ. ՄԻ՝ ԵՐԿՆԶԻՔ, ԶԷ՝ ԱՍՏ, ՔԱՆԶԻ ՅԱՐԵԱՆ»:

Այո՛, ո՛վ հավատացյալ ժողովուրդ հայոց, «ՅԱՐԵԱՆ ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԵՌՆԻՆՈՅ, ՓԵՍԱՅՆ ԱՆՄԱՀ ԵՒ ԵՐԿՆՍՈՐ. ՔԵԶ ԱՒԵՏԻՔ ԽՆԴՐՈՒԹԵԱՆ»:

Անհունին մեջ տիեզերքին, երբ մեզր նեղեկով, յույսի առաջին հառազայրները շողացին ազատ, այդ պահուն ահա ուրիշ աշխարհի մը մեջ, — մարդոց աշխարհին մեջ, — մանվան և կյանքի սահմաններուն վրա, նոր յույս մը ծագեցավ: Քակվեցավ կնիքը նյութին, նյութին, նյութը զարձավ յույս, մեռյալը՝ կենդանի, մարմինը՝ հոգի. մեռելներեն հարլավ Քրիստոս:

Զատիկ է այսօր, սիրելի՛ զավակներ Մեր: Հույսի տուն է այսօր, յույսի տուն է այսօր, կյանքի տուն է այսօր: Եվ զարուն է այսօր: Արդյո՞ք կարելի՞ է խոսիլ մանվան և կյանքի մասին՝ առանց զարունքի, առանց հարուրյան: Մահ և կեանք կմիանան զարունքի յույսով. մահ և կյանք կհաշտվին հարուրյան հույսով: Կյանքը մահով կվերածեն հարուրյան փառքով:

Մարդուն մեծագույն տունն է այսօր, զի հարուրյան և անմահուրյան զաղափարը մեծագույն հաղթանակն է մարդուն, բոլոր ժամանակներու մեջ, բոլոր երկիմեներու տակ:

Մարդկային ցեղի տիեզերական սպասումին իբրև պատասխան՝ ծնավ և հայտնվեցավ Հիսուս: Եվ իբրև կատարումը մեծ ու կենարար հույսին՝ «ՅԱՐԵԱՆ ՔՐԻՍՏՈՍ Ի ՄԵՌՆԻՆՈՅ»:

«ԶԻ ԵԹԷ ՅԻՍՈՒՄ ԶԻՅԷ ՅԱՐՈՒՅԵԱՆ, ԸՆԴՈՒՆԱՅՆ Է ՔԱՐՈՂՈՒԹԻՒՆՆ ՄԵՐ, ԸՆԴՈՒՆԱՅՆ ԵՆ ԵՒ ՀԱՌԱՏՔՆ ԶԵՐ»:



«ԶԷ ԱՍՏ, ՔԱՆԶԻ ՅԱՐԵԱԻ»

Հսկեցե՛ք և արքուն մնացե՛ք, որ հարության հույսը չմարի ձեր հոգիներեն ներս: Հավեն ապրելու տենչով է, որ մարդ կգերազանցե ինքնիրեն, կդառնա շինող, ստեղծագործող, կդառնա արարիչ, կդառնա անմահ:

Մեր բովանդակ հոգեկան աշխարհը, իր բոլոր արժեքներով, կառուցված է հարության հույսին և հավիտենական կյանքի գաղափարի պատվանդանին վրա: Այդ պատվանդանը նյութեղեն չէ, այդ պատվանդանը նույնիսկ բանական չէ, զի յոկ բանականությամբ՝ լրիվ հանաչելի և րմբոնելի չէ ան: Այդ պատվանդանը շատ ավելին է. ան հրեղեն զգացումն է, ամենատիրական իղձը՝ կյանքի հովիտեն անցած, անրիվ անհամար սերունդներու երակներեն հոսած, և այժմ հասած մեր մտածումի և սրտի այլևի՜մ արկերուն:

Այս կյանքեն հետո, և մահեն հետո, նոր կյանք մը ապրելու տենչը, հրաշայի երազն է մահախոնհալ մարդուն, հստած ամեն մեկիս սրտին, մտքին մեջ: Եվ այդ իսկ է փառքը մարդուն հոգեկան ուժերուն: Այդ հուր տենչեն է, որ կրթի ամեն ինչ՝ որ նշմարիտ է ու արդար, բարի և գեղեցիկ, առաքինի և սուրբ: Առանց հավեն ապրելու հույսին, մարդ կմեռնի մահեն իսկ առաջ, այդ հոյսով, սակայն, ան կապրի մահեն ալ անդին:

Այս է յուսեղեն համբան բոլոր այն մարդոց և ժողովուրդներուն, որոնք հարության հույսով՝ կապրին, կգործեն, կշինեն ու կստեղծագործեն, և կյանքի սահմանը անցնելի ետք, կապրին հավիտյան:

«ԵՒ ԱՐԴ, ԶԻ ՈՒՆԻՄՔ ԱՅՍՊԻՍԻ ՅՈՅՍ, ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՐԶԱԿՈՒԹԵԱՄՔ ՎԱՐԵՍՅՈՒՔ» (Բ Կորնթ. Գ 12):

Մեր ժողովուրդը, հայ ժողովուրդը, գրեթե իր ծնած օրեն, բայց մահավանդ Քրիստոսի հարության ավետիսը բնորոնելեն վերջ, այսպես ըմբռնեց կյանքը երկրային, այդ հավատով ապրեցավ ան ու բարձրացավ ժամանակի կատարներեն վեր, այդ հույսով չմեռավ, այդ հույսով պիտի ապրի ան հավետ:

Միայն մահկանացուները չունին հույսը հարության և հավիտենական կյանքին:

Հայ ժողովուրդը մահկանացու չէ: Հարության հույսով՝ Գրիգոր Լուսավորիչ, Խոր Վիրապ իշավ: Հարության հույսով բարգմանեցին և զարդարեցին իմաստն Անեղին՝ Սահակ և Մեսրոպ մեծ սուրբեր մեր և աշակերտները անոնց:

Հարության հույսով ինկան Ավարայրի դաշտին վրա Վարդան Կարմիր և իր զինվորները արի: Հարության հույսով աղոթեց մեծ Վարդապետը Նարեկա վանքին: Հարության հույսով մտածեց, երգեց Շնորհալին Ներսես: Հարության հույսով բարձրացան տանարները մեր իրենց անհառ ձևերով: Հարության հույսով տառապեցավ և մարտիրոսացավ ամբողջ Ազգը մեր և հերոսացան ազատատենչ քաջ զավակները մեր:

Եվ այդ նույն հույսով, և այդ նույն տենչով, արյուն արցունքով, հազար-հազար անմեղ զոհերով, մեր ժողովուրդը վերջապես, վերջապես այո՛՛ հասավ մեր օրերուն՝ իր նոր կյանքի այս ապահով ափին, և սկսավ վերստին շնչել, վերստին ապրիլ, վերստին շինել, կառուցել ու ծաղկեցնել հին երկիրը մեր, Մայր երկիրը մեր, աչքի լույսը մեր, Հայաստանը մեր:

Եվ երբ կդիտենք մեր այս փոքրիկ ածուն, Արարատի փեշերուն, շեն ու բարգավաճ, խաղաղ, արևոտ, միշտ դեպի վեր և միշտ դեպի հառաջ իր հաղթական երթով, ինչպե՛ս չհավատա՞նք հարության հրաշքին, ինչպե՛ս չհավատա՞նք մեր ժողովուրդի կյանքի ուժերուն, հավեն ապրելու միշտ հաղթող տենչին, մեր կյանքի պայծառ, իրավ գարունին:

Մեր կյանքը, անհա ինքը հարությունն իսկ է մեր խաչված Ազգին:

Ով նշմարիտ հոգի ունի հայկական՝ ան կտեսնե լույս այսօրը և արևը գալի՞ք պայծառ օրերուն:

«ԲԱԶԱՆԱԿԵՐՅԱՐՈՒՔ, ԵՒ ԶՈՐԱՍՅՈՒՆ ՍԻՐՏՔ ԶԵՐ, ԱՄԵՆԵՔԵԱՆ ՈՅՔ ՅՈՒՍԱՅԵԱՎ ԷՔ Ի ՏԷՐ» (Սաղմ. Լ 25):

Տարակուսողներ Մենք գիտենք որ կան, հեռու արկերուն ցրված հայոց մեջ, իբրև տատանող ու մարող նրազներ. կան և այնպիսիներ, ամառ՝ ս, որոնց հակատաքի՜րն է միտել ու հեգնել, ոչինչ չինել իրենց հայրենի նոր կտորի տակ, և նույնիսկ ատել, և նույնիսկ ֆանդել, և այն ալ երբեմն հոգևոր սխմի ներքև:

Անոնց ոտքին տակ պատվանդան չկա, անոնց համբուն վրա հորիզոն չկա, անոնց սրտին մեջ մեր ժողովուրդի վերածնունդի ստուգությունը չկա: Կանգնած են անոնք մեր եկեղեցիի ու Ազգի կյանքի հանապարհի կեսին, ու փառացած,

մնացած են այնտեղ: Բայց հեռու մեզմե զգացումը վնասողը, հոռետեսություն: Այս Ջատկի օրով, այս հրաշքի օրով, կյանքի ուժերուն, բարիքն լուս ուժերուն, հարության օրով, Մենք կհավատանք անոնց զարթոնքին, անոնց հաշտության, անոնց դարձին: Ինչքան ալ փոքր բլլա համրանք անոնց, Մեր սիրտը այրող, շերմագին իղձն է, որ մեր ցկեղեցիի և մեր Ազգի զավակներեն ոչ ոք կորսվի, ոչ ոք ուժանա, ոչ ոք մեռնի: Ոչ քե հերձում, այլ միաբանություն, ոչ քե բաժանում, այլ մեկտեղում և գործակցություն, սեր, խաղաղություն: Մեր ժողովուրդի արդար խիղճը վկա, մեր մշակույթը, մեր պատմությունը և մեր նոր կյանքը վկա, Մենք, բոլոր հայերս, մեկ Ազգ ենք և մեկ ցկեղեցի՝ անխախտ, անբաժան այժմ և հավիտյան, ամենայն հայոց Մայր Աթոռ Ս. Էջմիածնով և Մայր Հայրենիքով:

Հոգիի աչքերով կտեսնենք Մենք ու կզգանք, քե ա՛յս է նշմարիտ ապրումը և դավանանքը բոլոր հայերուն, քե՛ Հայրենիքն ենքս, քե՛ Հայրենիքն դուրս: Եվ միսիրարված ենք Մենք:

Արդ, Ս. Հարության ուրախությամբ լեցուն, կողջունենք զձեզ բոլորդ, բոլորդ անխախտ, սիրելի՛ հավատացյալներ, հարազատներ Մեր, և կօրհնենք զձեզ, ձեր կյանքն ու ձեր ձեռաց բարի գործերը: Ողջ մնացե՛ք և փառապանք՝ հոգիով ու մարմնով, խաղաղ օրերով, բարի օրերով, շեն ու երջանիկ: Սիրեցե՛ք զիրար, սիրեցե՛ք ձեր Ազգն ու ձեր Մայր ցկեղեցին, սիրեցե՛ք հավատքի ամրոց և հայոց պարծանք Ս. Էջմիածինը մեր հավիտենական, անփոխարինելի, անփոխադրելի ու անկրկնելի:

Հարուցյալ Փրկչի լույս շնորհները բոլ առատ շողան ձեր հոգիներեն ներս: Նոր կյանք առած, նոր հույսերով վառ, փայեցե՛ք անվերջով, խաղաղ ու համատեղ շաղկապ հառաք, և ամեն՛ք Ազգին, ցկեղեցիին ու Մայր Հայրենիքին՝ լույսը ձեր մտքին, սերը ձեր սրտին և շինարար ուժը ձեր բազուկներուն, ի փառս Աստուծո և հայ ժողովուրդին:

Թող «ԱՍՏՈՒԱՄ ՅՈՒՍՈՅ ԼԻ ԱՐԱՍՅԷ ԶՄԵՉ ԱՄԵՆԱՅՆ ԽՆԴՈՒԹԵԱՄԲ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ, ԱՌԱՒԵԼՈՒԼ ԶԵՉ ՅՈՒՍՈՎ՝ ԶՕՐՈՒԹԵԱՄԲ ՀՈԳԻՈՅՆ ՍՐԲՈՅ» (Հոռմ. ԺԵ 13):

«Կենարար շնորհք Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին բնդ ձեզ բնդ ամենեսին, զի նշմարտապէս «Քրիստոս յարեալ ի մեռելոց»: Ամեն:

